

ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԻԱՖԻԳՈՒՐ ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ

արվեստագիտության թեկնածու

Հայաստանի պետական մանկավարժական համալսարան

Ամփոփագիր

Հոդվածը ներկայացնում է Խաչատուր Իսկանդարյանի միաֆիգուր մանրաքանդակների վերլուծությունը: Իսկանդարյանի ստեղծագործական ձեռագիրը շատ յուրատեսակ է: Նրան բնորոշ է գեղարվեստական արտահայտչամիջոցների անընդհատ փնտրտույքը: Օգտվելով ժամանակակից կերպարվեստի տարբեր ժանրերի նորարարական առանձին տարրերից, ձևաոճական եղանակներից ու հնարներից՝ քանդակագործը դրանք ի սպաս էր դնում իր հույզերն ու զգացողություններն առավելագույնս հաղորդելու համար, ինչը մշտապես թարմ լիցք էր հաղորդում նրա աշխատանքներին: Այդ պատճառով էլ դժվար է հստակորեն բնորոշել նրա ստեղծագործությունը գեղարվեստական որևէ ուղղության սահմաններում: Մանրաքանդակը Իսկանդարյանի գեղարվեստական ժառանգության ամենաձանրակշիռ մասն է: Այս աշխատանքներում քանդակագործը ներկայացրել է հասարակ մարդկանց՝ նրանց առօրյայից վերցնելով իր քանդակի նյութն ու շունչը: Թեմաների բազմազանության մեջ հատկապես գրվում են կանանց և արվեստագետների կերպարները:

Առանցքային բառեր. Խաչատուր Իսկանդարյան, մանրաքանդակ, հայկական քանդակ, ձևաոճային եղանակ, տարածաչափություն, բրոնզ:

ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը (1923-2015) առաջին արվեստագետներից էր, որոնք սկսեցին հայ կերպարվեստում զարգացնել մանրաքանդակը: Նրա ստեղծած փոքրածավալ կերպարների ստույգ գտնված դիրքերը դիտողին անմիջապես վարակում են անմիջական հուզական տրամադրությամբ, ստիպում երկար կանգնել դրանց դիմաց, մտովի հետները զրուցել, հասկանալ նրանց էությունը:

Ասվածի լավագույն օրինակներից է «Սպասում» (բրոնզ, 1970) քանդակը, որն ստեղծված է հոգեբանական և փոքր-ինչ հուզական նկարագրով (նկ. 1): Այստեղ լիարժեք դրսևորում է գտել դյուրագագացության և ներքին կենսուժի համաձուլվածքը: Մայրանալ պատրաստվող կինը սպասում է, հավանաբար, պատերազմ մեկնած ամուսնու վերադարձին: Նման համոզմունք է ձևավորում այն հանգամանքը, որ Իսկանդարյանը տարբեր աշխատանքներում շոշափել է Հայրենական մեծ պատերազմի թեման (տես, օրինակ՝ «Բանակային երաժիշտները» (1953), «Դաշտային խոհանոց» (1958), «Բանակային նկարիչը» (1965), «Նրանք չվերադարձան» (1962) հորինվածքները): Ապագա մայրը լի է խոհերով, նա չի նայում դիտողին, և նրա՝ մի փոքր թեք պահած դեմքին, որը մանրակրկիտ մշակված չէ, ավելի շատ մտազբաղ, խորունկ ապրումներ ենք նշմարում, քան այդ տարիքին հատուկ կենսախնդություն: Կնոջ գլխի դիրքին արձագանքում է շրջագցեստի քղանցքի նույնատիպ թեքությունը, որ հաղորդում է գեփյուռի առկայություն:

Իսկանդարյանն իմպրեսիոնիստների նման ստեղծել է ֆակտուրայի թրթռացող, հարափոփոխ էֆեկտներ՝ անտեսելով քանդակի առարկայական ձևն ու ծավալը: Նրան հաջողվել է կերպարի փոքր-ինչ զգայական, իմպրեսիոնիստական ձևերի օգնությամբ ստեղծել սպասումը մարմնավորող յուրօրինակ կերպար: Հետաքրքիր է, որ թեև կնոջ դեմքը մանրակրկիտ մշակված չէ, սակայն շեշտված են ապագա մոր կուրծքն ու որովայնը, ինչն էլ երեխային կերակրելու և մայրությունն ընդգծելու խորհուրդն ունի¹: Բացի այդ, երեխայի աշխարհ գալու սպասումը զուգորդվում է պատերազմից ամուսնու վերադարձի սպասմանը: Աշխատանքում առկա է նաև բնանկարչական տարր. դա ծառի պատկերումն է: Այն կարծես հանդիսանում է հղի կնոջ և՛ հենարանը, և՛ խոհերի լուռ վկան: Ապագա մոր երիտասարդ, առինքնող կերպարն ասես ճառագում է ներքին մի հանգստությամբ, օջախի այդ պահապանն ընկալվում է իբրև մարդկային սպասումի խորհրդանիշ:

1. Популярная художественная энциклопедия. Архитектура. живопись. скульптура. графика. декоративное искусство, книга 2, Москва, 1986, с. 112.

Երբեք չխզելով կապը դասական ռեալիզմի ավանդույթների և սկզբունքների հետ՝ Իսկանդարյանը, այդուհանդերձ, որոնում էր արտահայտչական նոր միջոցներ՝ օգտվելով ժամանակակից կերպարվեստի նորարարական առանձին տարրերից, ձևաճանկան եղանակներից ու հնարներից: Քանդակագործն անհրաժեշտության դեպքում գործածում էր դրանք, որպեսզի առավելագույնս կարողանար արտահայտել իր հույզերն ու զգացողությունները, ինչը նորարարական լիցք էր հաղորդում նրա աշխատանքներին: Այդ պատճառով էլ դժվար է հստակորեն բնորոշել նրա ստեղծագործությունը գեղարվեստական որևէ ուղղության սահմաններում:

«Կինը պատկերասրահում» քանդակում (բրոնզ, 1981) հրաշալի է փոխանցված տարածաչափության և ծավալայնության գեղարվեստական հմտությունը (նկ. 2): Պատկերված է ձեռնափայտով մի կին, որ եկել և ուսումնասիրում է պատկերասրահում գտնվող նկարները: Կինը ներկայացված է մի փոքր կռացած՝ դեպի նկարը հակված կեցվածքով: Վարսերը խնամքով հավաքած, կիսադեմով լուծված նրա թեք գլուխը դիտողի հայացքն անընդհատ ուղղում է ներքևում տեղակայված նկարին: Այս եղանակով քանդակագործը մեզ դարձնում է ցուցահանդեսի մասնակիցը: Բացի սյուժեից, քանդակում Իսկանդարյանին հատկապես հետաքրքրել է ձևի ուսումնասիրությունը, ինչի մասին վկայում են կնոջ կերպարի մշակումները, դիմագծերի փոխարեն դեմքին նշմարելի են մի քանի թվացյալ ուրվագծեր, շեշտադրված չեն աչքերը, հոնքերը, շրթունքները, կա ընդամենը դեմքի ընդհանուր արտահայտություն, որը լի է ենթադրվող հետաքրքրասիրությամբ:

Տեխնիկական վարպետության և ձևատարածական հմտության հետ մեկտեղ Իսկանդարյանն ուներ գեղարվեստական տարբեր ոճերի նուրբ զգացողություն. ռեալիստական քանդակների կողքին տեսնում ենք նաև ռոմանտիզմից («Մեղեդի», 1985, «Անձրև», 1976), ֆուտուրիզմից («Հեծանվորդները», 1984) ազդված աշխատանքներ:

Քնարական մեղմ տրամադրությամբ ու թովիչ լիրիզմով է ստեղծված «Մեղեդի» քանդակը (բրոնզ, 1985, նկ. 3): Այստեղ,

ինչպես և հաջորդող մի քանի գործերում («Օհան Դուրյան», «Անձրև»), դրսևորվել է Իսկանդարյանի հրապուրանքը ռոմանտիզմով, որին բնորոշ էր ուժեղ, խոռվահույզ, քնարական, անձնագոհության պատրաստ կերպարների ներկայացումը:

Ահա այդ հատկանիշներով է օժտված «Մեղեդի» քանդակը մարմնավորող ջութակահարի կերպարը, որը ներկայացված է ինքնասույզ լարման, ծայրահեղ նվիրումի պահին: Երաժշտի դիմագծերը մշակված չեն առնականություն արտահայտող ֆորմաններով: Նրա աչքերը փակ են, որ ավելի շեշտում է կերպարի հուզական հոգեվիճակը: Թվում է նույնիսկ, թե երաժշտի պրկված մարմինը հագիվ նկատելի շարժվում է իր ստեղծած հնչյունների տակ, և նրբագեղ ձեռքերի, բարակ ու երկար մատներով հյուսված երաժշտությունը կարծես լսելի է դիտողին: Բնատուր արվեստականությունն ակնհայտ դրսևորում է գտել երաժշտի նիհարվումն, մի քիչ կորացած կազմվածքում: Երաժշտության յիթմերին ենթարկվելով՝ նա մարմնով առաջ է եկել և կիսանստած դիրք ընդունել: Նստարանի հետևում պատկերված ծառը լրացնում է հորինվածը: Այն կերպավորում է ստացել քանդակագործի ձեռքերում՝ հիշեցնելով մարդու դեմք, որը ոչ միայն ունկնդրում է երաժշտությունը, այլև ընկերակցում է երաժշտի միայնությանը: Հորինվածքի աչքի ընկնող կառուցվածքայնության և համամասնությունների հստակ համաձայնեցվածության հետ մեկտեղ, ընդհանրացումները ձեռք են բերված ոչ մանրակրկիտ մշակված ֆակտուրաների շնորհիվ: Քանդակագործը կարողացել է իր ընտրած մոտիվի օգնությամբ գտնել հուզականությունն ապահովող ստույգ բանաձևեր:

Իսկանդարյանի մանրաքանդակներից շատերը տեղ են գտել բազմաթիվ թանգարանների ցուցադրություններում: Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահը ձեռք է բերել «Թուֆ են թափ տալիս» (1986) և «Աղջիկը օճառի պղպջակներով, կատունների հետ» (բրոնզ, 1987) քանդակները¹: Վերջինը ստեղծված է բարի, սրտալից հումորով, որը համադրված է կենցաղի խնդուն թատերայնության, խաղի, ներկայացման հետ (նկ. 4): Իս-

1. Տե՛ս ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա, այլոմ (կազմող՝ Սյուզաննա Փիլոյան), Երևան, 2010, էջ 9:

կանդարյանը թեև հանգամանորեն ու մեծ սիրով է ներկայացրել թեմայի մանրամասները, բայց դրանք չի պարտադրել դիտողին, չի աղավաղել սյուժեի բնական թուլանքը: Տեսարանն ասես դիտված է մանկական ընկալման պրիզմայով, և ըստ այդմ էլ նման ընկալում է ենթադրում: Աշխատանքի վերնագիրն ինքնին հստակեցնում է սյուժեի բովանդակությունը. պատկերված է աստիճաններին նստած մի աղջիկ, որը խաղում է օճառի պղպջակների և կատուների հետ: Նա մի ձեռքը տարել է վեր՝ դեպի դեմքը, իսկ մյուսն իջեցրել է ներքև՝ իր մոտ բարձրացող կատուներին շոյելու համար: Վերջիններս փորձում են բռնել օճառի պղպջակները: Աղջիկը կարծես մի հետաքրքիր բեմադրություն է ներկայացնում կատուներին: Նրա ոչ միայն ձեռքերին, այլև ոտքերին օճառի պղպջակներ են, որ էլ ավելի ինքնատիպ է դարձնում քանդակը: Հորինվածքը գտնվում է մեկ միասնական ամբողջականության մեջ. գեղեցիկ արտահայտչականությամբ համադրված են աղջկա անհոգ խաղը և ջերմ վերաբերմունքը կատուների հանդեպ:

Շատ արվեստագետների համար ստեղծագործական ներշնչանքի, անկեղծ հիացմունքի և կենսատառ հուզականության աղբյուր է կնոջ կերպարը՝ իր արտաքին և ներքին գեղեցկությամբ, բնավորության ու խառնվածքի հակասական, երբեմն խորհրդավոր թվացող կողմերով:

Մի փոքր այլ մեկնաբանություն է ստացել կնոջ կերպարը Իսկանդարյանի արվեստում. նա կանանց, հիմնականում, ներկայացրել է թեմատիկ հորինվածքներում: Վերջիններն անմիջական դիտողականությամբ և ոչ մանրակրկիտ մշակումներով ստեղծված աշխատանքներ են, որոնցում հաճախ անտեսվել են կանանց ֆիզիոնների ձևաձավալային կողմերը: Բացառություն են կազմում «Հեծանվային մրցորդուհին» (1966) և «Կինը ջութակով» (1995) գործերը (նկ. 5, 6): Եթե «Հեծանվային մրցորդուհին» քանդակում Իսկանդարյանին հետաքրքրել է միայն կնոջ մարմնի ուսումնասիրությունը, ապա «Կինը ջութակով» քանդակում, դրանից բացի, առկա է նաև բնորդի հույզերի բարդ համակարգի ու հոգեբանական ապրումների

ուսումնասիրություն: Մերկ ներկայացված մրցորդուհին լի է ներքին էներգիայով: Նա ունի դիմահայաց դիրք, անկաշկանդ կեցվածք. մի ձեռքը դրել է կոնքին, մյուս ձեռքով՝ բռնել հեծանիվը, իսկ աջ ոտքը մի փոքր ծալված է: Մրցույթին պատրաստվող կնոջ մարմնի ստատիկ լուծումն առանձնահատուկ հմայք և խորհրդավորություն է հաղորդում այս ստեղծագործությանը: Մերկ մարմնի յուրաքանչյուր մասնիկը հագեցած է կենսական ավյունով: Այստեղ մերկության ցուցադրումն ընդգծում է քանդակագործի հետաքրքրությունը դասական արվեստի ավանդույթների ու մոտիվների նկատմամբ:

Ամեն ինչ այլ կերպ է մեկնաբանված «Կինը ջութակով» ստեղծագործության մեջ, որ յուրահատուկ քնքշության, գորովանքի ու նրբագեղության զմայելի օրինակ է: Այն, ըստ էության, կանացի հոգու պեղումն է՝ կին էակի ապրումների, ներաշխարհի լուսաբանումը: Քանդակագործն արտացոլել է ֆիզիկականի ու հոգևորի, իրականի ու իդեալականի պայքարը, և ցույց է տվել «հավերժական գեղեցիկի» և «հավերժական կանացիության» իր մտատիպարը: Անօրինակ է կանացի մերկության այս մեկնաբանումը: Քանդակագործը ֆակտուրայի հարուստ խաղով պատկերում է զգայական թրթիռ, մաշկի տաք ու սառը ողորկության շոշափելիություն, ստեղծում է նյութական-իրականի տպավորություն: Այստեղ մեզ ներկայացված է զգայական հաճույքներից օտարված, ամոթխած ու առաքինի էությամբ մի կին: Երիտասարդ կինն ունի անսեփնեթ պահվածք. նա նստած է ծնկած, ձախ ձեռքով բռնել է ջութակի վերին մասից, իսկ ներքևի հատվածը հենել է ազդրին: Ըստ երևույթին, Իսկանդարյանը ջութակի պատկերումը ցուցադրել է փոխաբերական, համեմատական գուգորդության առումով. այստեղ ջութակը ներկայացված է որպես կնոջ խորհրդանիշ, որը հաճախ հանդիպում է ինչպես կերպարվեստում, այնպես էլ բանաստեղծական փոխաբերություններում: Քանդակում խնամքով հավաքված են կնոջ վարսերը, ինչն էլ իր հերթին ամբողջացնում է նրա կերպարը և կարծես պատմում է նրա բնավորության որոշ հատկանիշների մասին, որոնցից են

կոկիկությունը, փութաջանությունը, զսպվածությունը, խոհեմությունը: Հոգևոր տարուբերումներից արտաքուստ ապահովագրված անհողդողդ թվացող այդ կնոջ կերպարը ներքուստ փխրուն կանացի էություն է:

Մեկ այլ մտածողությամբ է լուծված մեր կողմից պայմանականորեն «Արվեստագետը» անվանված քանդակը¹ (նկ. 7): Ձգտելով իմաստային հստակության՝ Իսկանդարյանը թերևս չի զգացել իր որոշ աշխատանքներին վերնագիր դնելու անհրաժեշտությունը: Նա ջանացել է սյուժեների և խորհրդանիշների միջոցով օգնել դիտողին՝ ըմբռնելու գործերի բուն իմաստը: Գլխավորը՝ ստեղծագործությունների ավարտվածությունն ու ճշտգրությունն է, որից և ականա կարելի է ենթադրել թե՛ սյուժեները և թե՛ բովանդակությունները: Այստեղ հասկացվում է, որ հորինվածքը քանդակագործին հետաքրքրել է որպես պատկերի ենթիմաստը բացելու միջոց: Մոտեցման եղանակով Իսկանդարյանն աշխատանքին տվել է ինչ-որ տեղ դեկորատիվ և խորհրդանշական բնույթ: Քանդակը որքան կատարված է ռեալիստական ոճի սկզբունքների հիման վրա, այնքան էլ մեկնաբանված է հայեցողական մոտեցմամբ: Քանդակագործին հուզող արվեստի և մարդու հարաբերության թեման այստեղ մեկնաբանվում է իբրև արվեստի ուժի ազդեցությունը մարդու կյանքում՝ ուժ, որ ի վիճակի է կյանքն իմաստավորելու: Աշխատանքում ներկայացված է մի ֆիգուր, որի ձախ ձեռքին դիմակ է, աջ կողմում՝ ներկայակ: Այդ էակը փորձում է բարձրանալ պատվանդանին. դա է վկայում նրա ձախ ոտքի՝ ծավված և պատվանդանին հենված ձևը: Թեև այս աշխատանքը կարելի է դիտարկել որպես ինքնաքանդակ, այդուհանդերձ, ֆիգուրը ոչ տղամարդ է և ոչ էլ կին. նա ասես առհասարակ արվեստագետի ընդհանրացված արտահայտությունն է՝ անկախ նրա սեռից: Այդ են վկայում կերպարի մանրամասները. դեմքը տղամարդու է, բայց շեշտված է կանացի կուրծքը: Հետաքրքիր է ֆիգուրի՝ պատմուճան հիշեցնող հանդերձը, որը բացի երկու

1. Իսկանդարյանը չի վերնագրել մի քանի աշխատանքներ, ուստի առաջարկում ենք այս վերնագիրը:

սեռին էլ բնորոշ հագուստ լինելուց, իր հերթին խորհրդանշում է այն հաճելի և պարտավորեցնող կոչումը, որ պետք է իր ուսերի վրա կրի արվեստագետը:

Այսպիսով, ամփոփելով մեր վերլուծությունները, եզրակացնենք, որ քանդակագործն իր միաֆիգուր մանրաքանդակները հիմնականում ստեղծել է կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ, դիտակետերի հարստությամբ, զեղարվեստական կերպարներին վերաբերող հատուկ՝ սուր ու հնարամիտ նկարագրերով:

SUMMARY

Khachatur Iskandaryan's Monofigure Sculptures

Nare Nadaryan

PhD in Art history

State Pedagogical University of Armenia

The article presents an analysis of one-figure sculptures by Khachatur Iskandaryan. The creative personality of Iskandaryan is very peculiar. It is characterized by a constant search for artistic means of expression. Using separate innovative elements, different styles and techniques of different genres of contemporary art, the sculptor used them to fully express his emotions and experiences, which always gave a fresh impetus to his work. Therefore, it is difficult to clearly define his work within the framework of any artistic direction. Miniature sculpture occupies the most significant place in the artistic heritage of Kh. Iskandaryan.

The sculptor created characters of ordinary people, taking the scenarios and the spirit of his sculptures from everyday life.

Keywords: *Khachatur Iskandaryan, miniature sculpture, Armenian sculpture, different stylistic forms, stereometry, bronze.*

РЕЗЮМЕ

Однофигурные скульптуры Хачатура Искандаряна

Нарэ Надарян

Кандидат искусствоведения

Армянский государственный педагогический университет

Статья представляет собой анализ однофигурных скульптур Хачатура Искандаряна. Творческая индивидуальность Искандаряна весьма своеобразна. Для него характерен постоянный поиск художественных средств выражения. Используя отдельные новаторские элементы, различные стили и приемы разных жанров современного искусства, скульптор использовал их, чтобы максимально выразить свои эмоции и переживания, что всегда давало свежий импульс его работам. Поэтому сложно четко определить его творчество в рамках какого-либо художественного направления. В художественном наследии Х. Искандаряна миниатюрная скульптура занимает самое весомое место.

Скульптор изображал обычных людей, черпая сюжеты и дух своих скульптур из их обычной жизни.

Ключевые слова: *Хачатур Искандарян, миниатюрная скульптура, армянская скульптура, разные стилевые формы, стереометрия, бронза.*



1



2



3

1. «Սպասում»,
1970, բրոնզ, 40x22x11,
հեղինակի սեփականություն:
2. «Կինը պատկերասրահում»,
1981, բրոնզ, 29x18x16,
հեղինակի սեփականություն:
3. «Մեղեդի», 1985, բրոնզ,
47x57x22, հեղինակի
սեփականություն:



4



5



6



7

4. «Մարտի 19-ի զոհերի հիշատակը», 1987, բրոնզ, 50x20x23, Տրետյակովյան պատկերասրահ, Մոսկվա:

5. «Հեծանվային մրցորդուհին», 1966, բրոնզ:

6. «Կինը ջութակով», 1955, բրոնզ, 96x50x55, հեղինակի սեփականություն:

7. «Արվեստագետը», անթվակիր, բրոնզ: